ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ հայրենակիցներ, Հայոց փառապանծ Բանակի քաջարի՛ մարտիկներ, լրանում է Հայոց բանակի կազմավորման 33-րդ տարեդարձը:

Երեք տասնամյակ շարունակ հայոց պետականությունն անսասան է՝ շնորհիվ սահմանին կանգնած հայի: Այն հայի, ում համար կա երկու բացարձակ ճշմարտություն ՝ Աստված և Հայրենիքը: Հայրենիքից դուրս, հայրենիքից զատ նրա համար չկա ու չի կարող լինել խաղաղություն, իսկ հայրենիքի խաղաղ երկնքի երաշխավորը պիտի լինի մեզանից յուրաքանչյուրը:

Պատմությունը քանիցս ապացուցել է, որ հայոց բանակի ոգին մարտունակ է, հավատքը՝ անսասան: Նրա մարտնչող էությունը ժամանակի և ոչ մի դիպված չի կարողացել խեղել, քանզի հայ զինվորի տունը սահմանն է, խիղճը՝ Հայրենիքը:

Փա՛ռք ու պատիվ Հայոց բանակին:

Փա՛ռք նրա բոլոր որդիներին, ովքեր դարձել են մեր խաղաղության երաշխավորը:

Խոնարհվում եմ բոլոր նրանց առջև, ովքեր դարձել են Հայոց Բանակի ձևավորման հիմնասյունը, ում արյամբ օծվել են սահմանները հայոց:

Հարգանքներով՝ Սուրեն Կոստանդյան